# «ՊԷՊՕ» ՇԱՐԺԱՆԿԱՐԻՆ ԵՐԳԵՐԸ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ՔՂԻԻ ԵՒ ԱՏԱՆԱՅԻ
ՀԱՅՐ. - ՎԵՐԱՇԻՆԱՑ
ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ

ՁԿՆՈՐՍԻՆ ԵՐԳԸ
ՀԱՅՈՑ ԱՂՋԻԿՆԵՐ
ԴՈՒՆ ԷՆ ԳԼԽԷՆ...
ՊԸԼՊՈՒԼԻ ՀԻԴ
ՔԷՕՐՕՂԼԻԻ ԵՐԳԸ

1937
ՏՊԱՐԱՆ Ե. ԱՐՄԷՆ ԵՒ ԸՆԿ.
ՄԱՐՍԷՅԼ

# ՊԷՊՕ, ՇԱՐԺԱՆԿԱՐԻՆ ԵՐԳԵՐԸ

891.99-192

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ՔՂԻԻ ԵՒ ԱՏԱՆԱՅԻ
ՀԱՅՐ. - ՎԵՐԱՇԻՆԱՑ
ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ

A 31600

ՋԿՆՈՐՍԻՆ ԵՐԳԸ
ՀԱՑՈՑ ԱՂՋԻԿՆԵՐ
ԳՈՒՆ ԷՆ ԳԼԽԷՆ...
ՊԸԼՊՈՒԼԻ ՀԻԳ
ՔԷՕՐՕՂԼՈՒ ԵՐԳԸ

1937
ՏՊԱՐԱՆ Ե. ԱՐՄԷՆ ԵՒ ԸՆԿ.
ՄԱՐՍԷՅԼ

ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

# ՊԷՊՕԻ ԵՐԳԸ

ԽՕՍՔ
**Ե. ՉԱՐԵՆՑԻ**

ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ
**Ա. ԽԱՉԱՏՐԵԱՆԻ**

(ԵՐԳՈՒԱԾ Ա. ՏԵՍԱՐԱՆԻՆ ՄԷՋ)

Տամպը1 ձեռիս աշխատում իմ*,
Հալալ աշխատանքս իմ ուտում,
Վայ էն մարդին, աշխարհումս,
Խալխի2 դատած հացն է ուտում:

Հալալ մարդու սիրտը ուրախ,
Ճակատը միշտ բաց է ըլլում,
Վայ էն մարդին, որ համ կըճլում3,
Համ էլ անկուշտ լաց է ըլլում:

Տամպը ձեռիս ջուրն իմ մտնում,
Ձեռս ու ոտս թաց ին ըլլում,
Հալալ արիւն քրտինք թափում,
Քիրս4 ու տէտըս5 լաց ին ըլլում:

Լուսնակը լուս գիշեր խաւար,
Առաւօտը բաց է ըլլում,
Խըլպըլտալէն6 լօթի7 ձըկներ,
Պազարումը հաց ին ըլլում:

* **Թիֆլիզի բարբառին մէջ** *ե*ը **յաճախ** *ի* **կը փոխուի:**

1. **Տամպ** = *Ուռկան:*
2. **Խալխ** = *Ժողովուրդ:*
3. **Կըճլել** = *Կողոպտել:*
4. **Քիր** = *Քոյր:*
5. **Տէտ** = *Մայր:*
6. **Խըլպըլտալ** = *Թռչկոտիլ:*
7. **Լօթի** = *Ուտող խմող:*

# ՀԱՅՈՑ ԱՂՋԻԿՆԵՐ

(ԵՐԳՈՒԱԾ ԲԱՂՆԻՔԻՆ ՄԷՋ)

Հայոց աղջիկներ ձեր հոգուն մատաղ,
Երբ միտս էք գալիս, հոգի ջան,
Առում եմ ես ախ...
Հալւում եմ հալւում օտարութեան մէջ,
Ա՛խ սիրտս խորւում, հոգի ջան,
Ցաւիս չկայ վերջ:

Հայոց աղջիկներ ձեր հոգուն մեռնեմ,
Ձեր սիրուն աչերն, հոգի ջան,
Էլ երբ կը տեսնեմ...
Էդ սեւ սեւ աչերն, սեւ ունքով[1] պատած
Կարծես երկնային, հոգի ջան,
Ղալամով[2] քաշուած...:

Հայոց աղջիկներ, ի՞նչ անուն տամ ձեզ
Թէ հրեշտակ ասեմ, հոգի ջան,
Հրեշտակ չեմ տեսել...
Թէ մարդ անուանեմ, պեղամաղ[3] կ'անեմ,
Ուրեմն ի՞նչ ասեմ, հոգի ջան,
Մոլորուած եմ ես...:

1. **Ունք** = *Յօնք*:
2. **Ղալամ** = *Վրձին*:
3. **Պեղամաղ** = *Ապերախտութիւն*:

# ԴՈՒՆ ԷՆ ԳԸԼԽԷՆ ԻՄԱՍՏՈՒՆ ԻՍ

ՍԱՅԵԱԹ-ՆՕՎԱՅԻ

(ԵՐԳՈՒԱԾ ՆՇԱՆՏՈՒՔԻ ՄԷՋ)

Դուն էն գըլխէն իմաստուն իս,
Խելքդ ջիհարին պազար[1] մի՛ անի.
Էրազումըն տեսածի նիշ
Մեզի մէ հէսապ մի՛ անի,
Ես խօ՛մ էն գըլխէն էրած իմ,
Նումէկանց[2] քապապ մի՛ անի,
Թէ շուր, գիտիմ, պէզարիկ[3] իս
Ուրիշին սապապ մի՛ անի:

Զը կայ քիզ պէս հուքմի հէքիմ՝
Դուն Լօւսօմի Ջալ, բազաւուր,
Ասկըդ ասկերումըն գոխած,
Համ դուն իս կօզալ[4] բազաւուր,
Թէ էսանց էլ առջ ունենամ՝
Գըլուխս արա տալ, բազաւուր,
Մտիկ արա՛ քու ստիղծողին՝
Նահախ տեղ ղազապ մի՛ անի:

Եարալուն հէքիմն էնտուր կ՚ուզէ՝
Դիղ տալու է, ցաւ տալու չէ.
Բանի կ՚ուզէ արպապ[5] ըլի
Ղուլըն ադին ցաւ տալու չէ[6]

Դու քու սիրտն իստակ պահէ՛,
Եատի[7] խօսքըն աւտաղու չէ,
Աստուծու սէրն կանչողի պէս
Դըռնեմէդ ճուղայ մի՛ անի:

Ամէն մարդ չի կանա խըմի
Իմ ջուրըն՝ ուրիշ ջըրեն է,
Ամէն մարդ չի՛ կանա կարդա
Իմ գիրըն ուրիշ գըրեն է,
Պունիարս[8] աւազ չիմանան՝
Քարափ է քարուկրեն է՝
Սելաւի պէս՝ առանց ցամքի,
Դուն շուտով խարայ մի՛ անի:

Քանի կ'ուզէ քամին տանէ,
Ծովեմէն աւազ չի՛ պակսի,
Թէկուզ ըղիմ, թէկուզ ջըղիմ
Մէճլիսներուն սազ չի պակսի,

Թէ կու պակսիմ, քիզ կու պակսիմ՝
Աշխարհիս մէ մազ չի՛ պակսի՝
Սայեաթ-Նօվու գերեզմանը
Հինդ, Հապաշ, Արաբ մի անի[9]:

1. **Պապ** = *Դուռ:*
2. **Նուրմէկանց** = *Նորէնոր:*
3. **Պէզարիլ** = *Զանձրանալ:*
4. **Եօզալ** = *Գեղեցիկ:*
5. **Արպապ** = *Վարպէտ:*
6. **Վույրն աղին դաւ տալու չէ** = *Ծառան տիրոջ կրակ տալու չէ:*
7. **Եատ** = *Ուրիշ:*
8. **Պունիար** = *Կազմուածք, նկարագիր:*
9. **Սայեաթ-Նօվու գերեզմանըն, Հինդ, Հապաշ, Արաբ մի՛ անի** = *Սայեաթ-Նովան շնչով մի թող տար որ անոր գերեզմանն ըլլայ՝ Հնդկաստանի, Հաբէշիստանի կամ Արաբիոյ մէջ:*

# ՊԼՊՈՒԼԻ ՀԻԴ

**( ԵՐԵՒԱՆԻ ՓՈՓՈԽԱԿ )**

(ԵՐԳՈՒԱԾ ՊԷՊՕԻ ՏԱՆ ՄԷՋ, ԻՐ ՁԵՐԲԱԿԱԼՈՒՄԷՆ ԵՏՔԸ)

ԱՆ

Պըլպուլի հիդ լաց իս էլի,
Վարդի նըման բաց իս էլի,
Վարդաչրով թաց իս էլի,
Չկայ քիզի նման, չկայ քիզ ի նման,
Քիզ նման, քիզ նման,
Դուն ես աննման:

Երեսըդ է շամս1 ու ղամար2,
Մէջքիդ ունես ոսկէ քամար3
Ճանըս դուս կու գայ քիզ համար,
Չկայ քիզի նման, եւայլն:

Տարտըս ասիմ կու լան սարիր,
էս ինչ բան էր, ւուր դուն արիր,
Սայեաթ-Նօվուն ճունուն4 արիր,
Չկայ քիզ ի նման, եւայլն:

*(1752)*

1. **Շամս** = *Արեւ:*
2. **Ղամար** = *Լուսին:*
3. **Քամար** = *Կամար:*
4. **Ճունուն** = *Խենթ:*

# ՔԷՕՐՕՂԼԻ

ԽՕՍՔ
Ղ. ԱՂԱՅԱՆԻ

ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ
ԱՇՈՒՂԱԿԱՆ

(ԵՐԳՈՒԱԾ ԲԱՆՏԻՆ ԱՌՋԵՒ, ՑՈՅՑԻ ԱՏԵՆ)

Այ Քէօրօղլի, ճան Քէօրօղլի (*կրկնել*),
Քեզ խաբեց Համզան 1, Քէօրօղլի, Հա՜յ, հա՜յ, հա՜յ:
Բայց որ դարձար դու չաղացպան,
Կանչիր թող գայ, ճան Քէօրօղլի, ճա՛ն,
Ճան Քէօրօղլի, ճան
Ճան Քէօրօղլի, ճան:

Թէեւ ղռ աթիցդ 2 գրկուած (*կրկնել*)
Բայց թուր ունիս վրէդ կախած, Հա՜յ, հա՜յ, հա՜յ:
Համզան սրտուկ թոկից փախած,
Բայց դու էլի ճա՜ն Քէօրօղլի, ճա՛ն,
Ճան Քէօրօղլի, եւայլն:

Մարդուս բախտն էլ անա այսպէս (*կրկնել*)
Պտըտւում է չաղացքի պէս, Հա՜յ, հա՜յ, հա՜յ,
Մէկ օր ահռելի վիշապ ես
Միւս օրն չաղացպան, Քէօրօղլի ճա՛ն,
Ճա՛ն Քէօրօղլի...

Բայց դու էլի Քէօրօղլի ես (*կրկնել*),
Ժողովուրդին սիրելի ես, Հա՜յ, հա՜յ, հա՜յ,
Թէկուզ չաղացպան էլ լինես,
Քիզ պատիւ կը տան, Քէօրօղլի:
Ճա՛ն Քէօրօղլի ..

1. **Համզա** = *խաբեբայ եւ վախկոտ ճերոս մը:*
2. **Ղռ աթ** = *Քէօրօղլիի գորշ ձին:*

ԳՐԱԴԱՐԱՆ

3160C

**ԱՅՍ ԵՐԳԵՐՈՒՆ**

*ձայնագրութիւնները ունենալու համար դիմել.—*

G. BOGOSSIAN
30, Bd. du Nord - La Rosière
Beaumont (St.-Julien)
MARSEILLE

1 ՖՐԱՆՔ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220031600

A 31600